


Ինչպես
աջակցել
գենդերային
բռնություն
վերապրած
անձանց,
երբ ձեր
բնակավայրում
մասնագիտացված
ծառայություններ
չկան



ԿԻՐԱՌԱԿԱՆ
ՁԵՌՆԱՐԿ

Ձեռնարկը նախատեսված է գրպանի ուղեցույցի հետ համատեղ կիրառության համար՝ նպատակ ունենալով աջակցելու հումանիտար ոլորտի աշխատակիցներին բոլոր այն իրավիճակներում, երբ չկան ԳԲ մասնագիտացված կազմակերպություններ (ինչպես նաև ԳԲ գոհերին ուղղորդելու մեխանիզմներ կամ ԳԲ մասնագետ/պատասխանատու):

Ձեռնարկի թիրախային լսարանը ծրագրերի ղեկավարներն են, տեխնիկական համակարգողները, թիմերի ղեկավարները, հսկողություն իրականացնողներն ու բոլոր ոլորտներում նման պաշտոն գրադեցնող անձինք, որոնք պատասխանատու են իրենց ոլորտներում մասնագետների կառավարման, վերահսկման ու նրանց կարողությունների ամրապնդման համար: Օրինակ՝ ՋՋԶ (ջրամատակարարում, ջրահեռացում և հիգիենա) ծրագրի ղեկավարը կարող է օգտագործել սույն ձեռնարկը և գրպանի ուղեցույցը, որպեսզի բացատրի հիգիենայի կանոնների պահպանման ջատագովներին, թե ինչ է պետք անել, երբ գեղեցիկային բռնություն վերապրած անձը դիմում է իրենց առօրյա աշխատանքի ընթացքում:



Ձեռնարկը նախատեսված է հիմնական ուղերձներն ու մոտեցումները ներկայացնելու համար, որպեսզի դրանց օգնությամբ.

1. նախապատրաստվի ու մշակվի ձեր ծրագիրը/միջամտությունը և
2. ձեր թիմը ծանոթանա գեղեցիկային բռնության գոհերին տրամադրվելիք աջակցությանը աշխատանքային առօրյայում:

Խորհուրդ ենք տալիս դիմել գեղեցիկային բռնության մասնագետներին՝ գրպանի ուղեցույցի տվյալները տեղայնացնելու և ձեր թիմի անդամներին վերապատրաստելու նպատակով: Տեղեկատվական այս ռեսուրսը համակիրառելի ուղեցույց է և չի կարող փոխարինել ԳԲ հիմնադրույթներին և ԳԲ իրազեկվածության մասով վերապատրաստման դասընթացին, որը հնարավորության դեպքում, պետք է անցկացվի ԳԲ պատասխանատուների կողմից հումանիտար ոլորտի աշխատակիցների համար: Թեև գրպանի ուղեցույցը հիմնված է Առաջին հոգեբանական օգնության (ԱՅՕ) ծրագրի վրա, դրա վերաբերյալ վերապատրաստումը կամ գիտելիքի ամկայությունն անհրաժեշտ է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախապատրաստություն. անվտանգ ծրագրերի մշակում էջ 3

Հուշումներ ձեր ծրագիրը մշակելու և անձնակազմին նախապատրաստելու վերաբերյալ՝ աջակցելու համար գեղեցիկային բռնությունից տուժած անձանց

Ճեպագրույց թիմի հետ էջ 5

- Կես օր
- Ամբողջ օր

Հիմնական խորհուրդներն ու առանցքային քայլերը՝ ուղղորդելու ձեր թիմի անդամներին գեղեցիկային բռնությունից տուժած անձանց հետ պատշաճ վարվելու համար, երբ վերջիններս որոշում են տրամադրել իրենց տվյալները:

ՀԱՎԵԼՎԱԾ I: Հիմնական հասկացությունները էջ 9

Վերապատրաստման հաջող անցկացման համար անհրաժեշտ հասկացությունները: Բոլոր այս բարդ հարցերը, առավել մասնագիտացված ռեսուրսների հղումները ներկայացվում են ի լրումն տվյալ ձեռնարկում ներառվածի:

ՀԱՎԵԼՎԱԾ II: Վերապատրաստման գործիքներ և լրացուցիչ ռեսուրսներ էջ 14

Չոհակենտրոն հաղորդակցման հմտություններ ձևավորելու համար ճեպագրույցի կազմակերպման ու տեղեկագրերի վերաբերյալ լրացուցիչ ռեսուրսներ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ. անվտանգ ծրագրերի գործարկում

ԳԲ-ից տուժած անձանց անվտանգ ու պատշաճ աջակցությունը սկսվում է համարժեք նախապատրաստումից: Թեև այս քայլը հաճախ անտեսվում է, այն թերևս ամենակարևորն է:

Նախապատրաստվելու հիմնական նպատակը գենդերային բռնությունից տուժած անձին հասանելի լուծումների տարբերակները հասկանալն է: Ստորև ներկայացված են այն քայլերը, որ դուք՝ որպես ծրագրի ղեկավար, թիմի առաջնորդ, տեխնիկական փորձագետ կամ այլ մասնագետ, կարող եք իրականացնել:

ԲԱՅԼ 1 Մշակել ծրագիր

- Ծրագրե՞ք՝** ինչպես ուղղորդել տուժածին. օգտվելու առկա ծառայություններից. տե՛ս #2
- Ճշտե՞ք** ԳԲ մասնագետների հետ, թե միջադեպերի (օրինակ՝ գենդերային կամ երեխաների ու դեռահասների նկատմամբ բռնության) վերաբերյալ այլոց տեղեկացնելու ինչ աշխատակարգեր են սահմանված ձեր երկրում: Դիմե՞ք ձեր կազմակերպության կամ ազգային այլ փորձագետների՝ լրացուցիչ ուղղորդում ստանալու համար:
- Համոզվե՞ք**, որ կան սեռական ոտնձգությունից և չարաշահումից պաշտպանության (ՊՍՈՉ) ընթացակարգեր ու աշխատակարգեր:
Տեղական հումանիտար աջակցության համակարգման մեխանիզմներով պետք է նախատեսված լինեն ուղղորդման հնարավորություններ:
- Պատկերացրե՞ք**, թե ինչպես կարող եք ներմուծել ԳԲ ռիսկերը մեղմելու մեխանիզմներ կամ բարելավել դրանք ձեր ծրագրում:
Ուսումնասիրե՞ք ձեր ոլորտին վերաբերող հատվածը ՄԳՄՀ ԳԲ ուղեցույցում (<http://gbvguidelines.org>):
- Գտե՞ք** ձեր տարածաշրջանում/երկրում կամ կազմակերպությունում ԳԲ զոհերին աջակցության ապահովման միջոց հանդիսացող կազմակերպությունը կամ անձին, որը **փրկօղակի դեր կատանձնի ուղղորդելիս**, եթե դուք կամ ձեր թիմի որևէ անդամ բախվի այնպիսի իրավիճակների, երբ դժվար է ճիշտ որոշում ընդունել, օրինակ՝
 - Գենդերային բռնությունից տուժած երեխաների հետ կապված:
 - Պարտադիր հաղորդում պահանջող:¹
 - Երբ տուժածի կյանքը անմիջական վտանգի տակ է:
 - Երբ տուժածը կարող է վնասել իրեն կամ այլոց:



ՄԻ՝ ՎՆԱՍԻՐ

Մի՛ տարածեք տուժածի մասին տեղեկություններ

Բացատրե՞ք ձեր թիմին, որ պետք է միշտ պաշտպանել զոհի ինքնությունն ու անվտանգությունը՝ չտարածելով նրա անձնական տվյալները (անունը, սոցիալական քարտի համարը) կամ նրա հետ տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ որևէ տվյալ (բռնարարի անունը, ծննդյան տարեթիվը, տան կամ աշխատավայրի հասցեն, նրա երեխաների դպրոցի հասցեն, միջադեպի կոնկրետ վայրն ու ժամը և այլն) առանց նրա համաձայնության:

¹ Կան իրավիճակներ, երբ հաղորդում ներկայացնելը պարտադիր է: Կյո՞ մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմե՞ք պաշտպանության գծով պատասխանատու անձին:

2. Տեղյակ եղեք գոյություն ունեցող ծառայությունների մասին

Միշտ դիմե՛ք ԳԲ մասնագետին, որպեսզի տեղեկանաք ձեր տարածքում առկա ծառայությունների մասին: Հնարավոր է, որ ձեր տարածքում չլինի ԳԲ հարցերով զբաղվող կազմակերպություն, ուղղորդման մեխանիզմ կամ ԳԲ հարցերով պատասխանատու, սակայն կլինեն այլ օգտակար ծառայություններ, որ կաջակցեն բռնությունից տուժած անձանց և կբավարարեն նրանց կարիքները:

Հումանիտար ոլորտի աշխատակիցները պատասխանատու են նաև հասանելի ծառայությունների և աջակցության հնարավորությունների վերաբերյալ թարմ տեղեկություններ ունենալու համար այն համայնքներում, որտեղ աշխատում են:

Ընդհանրապես և մասնավորապես տվյալ համայնքում հասանելի ծառայությունների մասին տեղյակ լինելը վճռական նշանակություն ունի: Աշխատե՛ք ձեր կազմակերպությունում, թիմում կամ խմբում գտնել պատասխանատուների (օրինակ՝ առողջապահության, հոգեկան առողջության/հոգեբանական աջակցության ու պաշտպանության մասնագետների), որոնք կարող են հասանելի ծառայությունների վերաբերյալ տեղեկություն տրամադրել:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ: *Ով ինչ է անում, որտեղ և երբ, խմբեր կամ ոլորտի առաջնորդներ ու կայքեր / տեղեկատվական կայքեր, ազգային կամ տեղական մակարդակով հանդիպումներ, կանանց իրավունքների պաշտպանության ու քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպություններ, տեղական/պետական ծառայություններ մատուցողներ, ԳԲ հարցերով տեղական խումբ կամ աշխատանքային խումբ, ՄԱԿ ՓԳՀ տվյալների կայք, ՄԱԿ-ի հումանիտար հարցերի համակարգման վարչություն, humanitarianresponse.info.*

3. Բացառե՛ք ձեր կանխակալ կարծիքներն ու ենթադրությունները

Ցանկացած անձ՝ անկախ սեռից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից, ամուսնական, հաշմանդամության կարգավիճակից, տարիքից, էթնիկ/ցեղական/ռասայական/կրոնական պատկանելությունից, անկախ նրանից, թե ով է բռնության դիմել նրա նկատմամբ, – թե ինչ հանգամանքներում է բռնությունը կատարվել, կարող է բախվել գենդերային բռնության հետ: Որպես հումանիտար ոլորտի աշխատակիցներ՝ մեր պարտականությունն է հարգել – պաշտպանել բոլորի իրավունքներն ու կարիքները՝ առանց կանխակալ ենթադրություններ ու դատողություններ անելու:



ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒՀԱՆ ՏՈՒԺՈՂԻ ՀԱՄԱՐ

Որոշ բուժհաստատություններ կարող են տրամադրվող ծառայությունների միջոցով կանխել ՄԻԱԿ-ի տարածումը միջադեպից 72 ժամվա ընթացքում, ինչպես նաև թույլ չտալ անցանկալի հղիությունը միջադեպից 120 ժամվա ընթացքում: Ձեր պարտականությունները չեն ներառում գենդերային բռնությունից տուժած անձանց համար հասանելի ծառայությունների գնահատումը: Սակայն կարևոր է **ձեր տարածքում տուժածներին միշտ տրամադրել նման ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ:**

Տուժած անձը պետք է որոշում կայացնի, երբ ամբողջ տեղեկությունը հասանելի լինի նրան, քանի որ բժշկական ծառայություններից օգտվելը պարունակում է և՛ օգուտներ, և՛ ռիսկեր: Բուժում ստանալու օգուտը առողջության համար դրական նախադրյալների ստեղծման մեջ է: Բժշկական ծառայություններին դիմելու ռիսկն այն է, որ դրանք կարող են գոյություն չունենալ կամ լինել ցածր որակի, ծառայություններ մատուցողները կարող են զգայունություն չցուցաբերել կամ վնաս հասցնել տուժածին, գաղտնիությունը կարող է չպահպանվել, ինչը կարող է լրացուցիչ վնաս առաջացնել:

Ճեպագրույց թիմի հետ

Ճեպագրույցի համար նշումներ և նյութերի նախապատրաստում

- Կարդացե՛ք** գրպանի ուղեցույցը և կից ծանոթագրությունը: Տեխնիկական աջակցություն և ուղղորդում ստանալու համար խորհրդակցե՛ք ձեր երկրի ԳԲ մասնագետի/աշխատանքային խմբի հետ: Եթե երկրում չկա ԳԲ համակարգման մեխանիզմ կամ պատասխանատու անձ, դիմե՛ք պաշտպանության պատասխանատուներին:
- Ձեռքի տակ **ուևեցե՛ք** ծառայությունների ու պատասխանատու անձանց անվանացանկ, որպեսզի տրամադրեք դա թիմի անդամներին ճեպագրույցի ընթացքում:
- Մանրամասնորեն **ուսումնասիրե՛ք** ձեռնարկը, եթե հնարավոր է, օգտագործեք ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ I-ով և II-ով նախատեսված լրացուցիչ գրականությունը, որպեսզի բարելավեք ԳԲ հիմնական հասկացությունների, ինչպես նաև գոհակենտրոն մոտեցման սկզբունքների վերաբերյալ ձեր գիտելիքը:
- Որոշե՛ք**, թե ովքեր են մասնակցելու վերապատրաստման ձեր դասընթացին: Խորհուրդ է տրվում դասընթացին հրավիրել ոչ ավելի, քան 25 մասնակից: Հաշվի՛ առեք բազմամասնագիտական թիմերով աշխատելու և տարաբնույթ ծառայություններ ներկայացնելու օգուտները: Տարբերակներից մեկն է նաև մեկ կազմակերպության ներսում ուսումնասիրել առկա աշխատակարգերը, հաշվետվողականության մեխանիզմներն ու ռեսուրսները:
- Եթե դա ընդունելի է ու անվտանգ, գրի՛ առեք** անձնակազմի կուտակած փորձը. ծանոթացե՛ք իրավիճակներին (սակայն խիստ գաղտնի պահելով անձնական տվյալները և փոփոխելով մանրամասները, որպեսզի դեպքի վերաբերյալ տվյալները չբացահայտվեն):
- Ծրագիրը **հարմարեցրե՛ք** ձեր և ձեր մասնակիցների պայմաններին՝ սահմանելով վերապատրաստման դասընթացի լավագույն ձևաչափը (1 ճեպագրույց 1 օրում կամ մի քանիսը մի քանի օրում):
- Հարմարեցրե՛ք** Հավելված II-ի վարժություններն ու տեղեկագրերը, որպեսզի դրանք համապատասխանեն ձեր իրավիճակին:
- Ամբողջ օրվա տարբերակը.** դիմե՛ք ձեր կազմակերպության կամ գործընկերների շրջանում ԳԲ մասնագետներին՝ ուսումնասիրվող դեպքերին ծանոթանալու և դերախաղեր կազմակերպելու համար:

Հիմնական ուղերձները և ճեպագրույցի ծրագիրը

Ստորև ներկայացված է ճեպագրույցի ծրագիր, որը կարող եք հարմարեցնել ձեր պայմաններին և թիմի կարիքներին: Գրպանի ուղեցույցի վերաբերյալ թիմերի հետ ճեպագրույց անցկացնելու առաջարկվող նվազագույն ժամանակը վերապատրաստման համար մեկ ամբողջ օր է կամ 2-3 շաբաթվա ընթացքում 7 ժամ՝ տարբեր ձևաչափերով (աշխատատեղում դասընթացներ, ուղղորդում և այլն): Դա բավարար ժամանակ կապահովի քննարկումների ու երկխոսության համար, որպեսզի հիմնական ուղերձներն ու ուղղորդող սկզբունքները ընկալելի լինեն: Արտակարգ իրավիճակներում կիրառվում է նաև կեսօրյա ծրագիրը:

Եթե ավելի շատ ժամանակ ունեք, դասընթացները կարելի է երկարացնել և օգտագործել ՀԱՎԵԼՎԱԾ II-ով սահմանված նյութերը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել տուժածների նկատմամբ հավանական վնասակար վերաբերմունքը հայտնաբերելու և զոհակենտրոն հաղորդակցման հմտություններ ձևավորելու վրա:

ԹԵՄԱ	Ներածություն	ԿԵՍ ՕՐ՝ 15 րոպե	ԱՍԲՈՂՋ ՕՐ՝ 30 րոպե
<p>ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ Ներկայացրե՛ք հիմնական ուղերձները</p> <p>ԳՈՐԾԻՋՆԵՐ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ Նախաբան</p> <p>ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ</p> <ul style="list-style-type: none"> Ճեպագրույցի նպատակն է՝ հիմնարար տեղեկություններ և ռեսուրսներ տրամադրել, որոնք պետք է օգտագործել, երբ ձեզ դիմում է գենդերային բռնությունից տուժած անձը: Այն հմտությունները, որոնց կծանոթանանք այսօր, կարող են կիրառվել ցանկացած կարիքավոր անձի դեպքում, սակայն մենք հատուկ ուշադրություն կդարձնենք գենդերային բռնությունից տուժած անձանց վրա: 	<ul style="list-style-type: none"> Գենդերային բռնությունից տուժած անձանց փնտրելը ձեր պարտականությունը չէ: Այդպես ավելի շատ վնաս կհասցնեք: Դրա փոխարեն մենք կքննարկենք այն, թե ինչպես է պետք օգնել, երբ մարդը դրա կարիքն ունի: Ձեր դերն է առանց դատելու լսել և առկա ծառայությունների մասին թարմ ու ճշգրիտ տեղեկություններ տրամադրել՝ թույլ տալով տուժած անձին ընտրություն անել: Հարկավոր չէ խորհուրդներ տալ, հարցազրույցներ անցկացնել, մանրամասնորեն հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել, ասել, թե ինչ է պետք անել կամ կարծիք հայտնել: Որպես հումանիտար ոլորտի աշխատակիցներ՝ մեր պարտականությունն է հարգել և պաշտպանել բոլորի իրավունքները, չանել կանխակալ ենթադրություններ ու դատողություններ: 		

ԹԵՄԱ	Ինչ է գենդերային բռնությունը	ԿԵՍ ՕՐ՝ 15 րոպե	ԱՍԲՈՂՋ ՕՐ՝ 30 րոպե
<p>ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ Ներկայացրե՛ք հիմնական ուղերձները Խմբային քննարկում և հասկացությունների բացատրություն</p> <p>ԳՈՐԾԻՋՆԵՐ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ՀԱՎԵԼՎԱԾ I: Հիմնական հասկացությունները ՀԱՎԵԼՎԱԾ II: Տեղեկագրեր և լրացուցիչ ռեսուրսներ Գրատախտակ և մատիտներ</p> <p>ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓՈՒՐՆԵՐ</p> <ul style="list-style-type: none"> Ճեպագրույցի նպատակն է տրամադրել հիմնարար տեղեկատվություն և ռեսուրսներ, որոնք պետք է օգտագործել, երբ ձեզ դիմում է գենդերային բռնությունից տուժած անձը: Այն հմտությունները, որոնց կծանոթանանք այսօր կարող են կիրառվել ցանկացած կարիքավոր անձի դեպքում, սակայն մենք հատուկ ուշադրություն կդարձնենք գենդերային բռնությունից տուժած անձանց վրա: 	<ul style="list-style-type: none"> ԳԲ տեսակները. ԳԲ-ն կարող է լինել ֆիզիկական, հուզական կամ սեռական: ԳԲ բոլոր տեսակներն ունենում են երկարատև, լուրջ հետևանքներ, սակայն բռնության տարբեր տեսակների համար անհրաժեշտ են տարբեր մոտեցումներ: ԳԲ հետևանքները. գենդերային բռնությունը թողնում է հուզական, առողջական/ֆիզիկական և սոցիալական հետևանքներ: Պետք է համոզված լինենք, որ վնաս չենք հասցնում տուժածին՝ ենթարկելով նրան բռնարարի կամ նրա ընտանիքի անդամների վրեժխնդրությանը, խարանհի կամ համայնքի կամ սեփական ընտանիքի անդամների կողմից բռնության՝ կրկնակի զոհ դարձնելով նրան կամ մեղադրելով բռնության պատճառ դառնալու մեջ: 		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներկայացրե՛ք հիմնական ուղերձները
Ասեկոսները իրականությունից տարբերելու վարժություն

ԳՈՐԾԻՔՆԵՐ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գրպանի ուղեցույցի հիմնական ուղերձները էջեր 2 - 3 և էջ 16
(երեխաների դեպքում)

Հավելված II: Մարդակենտրոն մոտեցումների տեղեկագիր

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

- Վերահաստատե՛ք հումանիտար ոլորտի աշխատակցի իրավասությունը. հումանիտար ոլորտի բոլոր աշխատակիցները առանց դատելու ու խտրականության պետք է աջակցություն տրամադրեն կարիքավոր անձանց, անկախ նրանց
 - սեռից,
 - սեռական կողմնորոշումից,
 - գենդերային ինքնությունից,
 - ամուսնական կարգավիճակից,
 - հաշմանդամության կարգավիճակից, տարիքից,
 - էթնիկ/ցեղական/ռասայական/կրոնական պատկանելությունից
 - նրանից, թե ով է բռնարարը/բռնության դիմողը, և
 - այն հանգամանքներից, որոնցում բռնությունը կատարվել է:

- Ձեր դերը լսելն է առանց դատելու, ինչպես նաև առկա ծառայությունների վերաբերյալ ճշգրիտ, թարմ տեղեկության տրամադրումը: Որից հետո տուժողը ընտրություն կանի:
- Հարկավոր չէ խորհուրդներ տալ, հարցազրույց անցկացնել, հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել և ծանոթանալ մանրամասներին, ասել, թե ինչ է պետք անել կամ ներկայացնել ձեր կարծիքը:
- Բռնությունից տուժած բոլոր անձինք տարբեր կարիքներ ունեն, հետևաբար պետք է միայն լսել և համոզված լինել, որ որոշումը նրանք են կայացնելու, իսկ դուք միայն կարող եք տեղեկություն տրամադրել:
Կիրառե՛ք մարդակենտրոն մոտեցում, ինչը նշանակում, որ դուք հաշվի եք առնում.
- **Հարգանքը.** բոլոր գործողություններն իրականացվում են տուժած անձի ազատ ընտրության, ցանկությունների, արժանապատվության ու իրավունքների նկատմամբ հարգանքով:
- **Անվտանգությունը.** տուժած անձի ապահովությունն ու անվտանգությունը առաջնահերթ է բոլորի համար:
- **Գաղտնիությունը.** մարդիկ իրավունք ունեն ընտրելու, թե ում պատմեն կամ չպատմեն եղելությունը: Գաղտնիություն պահելը նշանակում է երբեք որևէ մեկին չպատմել որևէ բան առանց տուժածի թույլտվության:
- **Խտրականության բացառումը.** հավասար և արդար վերաբերմունք բոլոր կարիքավորներին:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներկայացում

ԳՈՐԾԻՔՆԵՐ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գրպանի ուղեցույցի կառուցվածքը էջ. 4 և տեղեկատվական թերթիկը էջեր 5 - 6

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

- Ներկայացրեք գրպանի ուղեցույցը
- Մեր տարածքում չկան ԳԲ զբաղվող կազմակերպություններ, որ կարող են մասնագիտացված ինամք և ծառայություններ ապահովել գենդերային բռնությունից տուժած անձանց:

- Սակայն կան այլ ծառայություններ, որ կարող են օգտակար լինել տուժած անձանց կարիքները հոգալու տեսանկյունից:
- Լրացրեք գրպանի ուղեցույցում տրված տեղեկատվական թերթիկը:
- Այսքան տվյալներով միայն կարող եք կիսվել տուժածի հետ և նա պետք է որոշի կօգտվի այդ ծառայություններից, թե ոչ:
- (Տեղեկատվություն տրամադրեք հասանելի ծառայությունների վերաբերյալ. դրանցից օգտվելու հնարավորությունների և պատասխանատու անձանց մասին):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներկայացում և խմբային քննարկում

ԳՈՐԾԻՔՆԵՐ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գրպանի ուղեցույցով սահմանված «կարելի» և «չի կարելի»-ները, «ՅԵՏԵՎԵՔ» էջ 7 և «ԼՍԵՔ» էջ 8 բաժիններում: Տուժածի կարծիքը էջ 11, «ՅԵՏԵՎԵՔ»-ի բովանդակությունը էջ 13, «ԼՍԵՔ»-ի բովանդակությունը էջ 14, մանկական բաժնի «ՅԵՏԵՎԵՔ ԵՎ ԼՍԵՔ» հատվածը էջեր 17 - 18

ՀԱՎԵԼՎԱԾ II: Մարդակենտրոն հաղորդակցման հմտությունների տեղեկագիր

ԱՍԲՈՂՋ ՕՐ: Դերախաղեր (խորհրդակցե՛ք ԳԲ մասնագետի հետ, որպեսզի կազմակերպեք համատեքստին համապատասխանող դերախաղեր)

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓՈՒՆԵՐ

- **Ցուցում վարողի համար.** այս բաժինը վարե՛ք ԳԲ մասնագետի հետ:
- Մի՛ արհամարհեք որևէ անձի, որ դիմում է աջակցության:
- Տուժածի կարիքներն առաջնային են:
- Պահպանե՛ք գաղտնիությունը. մի՛ փաստաթղթավորեք տուժածին կամ միջադեպին վերաբերող որևէ տեղեկություն, այսինքն՝ ոչինչ գրի մի՛ առեք, մի՛ լուսանկարեք, մի՛ հրավիրեք մարդկանց տուժածի հետ քննարկման, մի՛ դիմեք լրատվամիջոցներին, մի՛ ձայնագրեք խոսակցությունները հեռախոսով կամ ցանկացած այլ սարքով:

- Թույլ տվե՛ք տուժած անձին արտահայտել զգացմունքները ցանկացած հարմար ձևով. որոշ մարդիկ ավելի զուսպ են, ուրիշները զայրանում են, գոռում են, արտասվում են և այլն: Լսե՛ք նրան և հարցրե՛ք, թե ինչպես կարող եք օգնել: Միջադեպի կամ մանրամասների մասին հարցեր մի՛ տվեք, փոխարենը նշե՛ք, որ պատրաստ եք լսելու այն ամենը, ինչ նա կպատմի:
- Փորձե՛ք բացահայտել այն իրավիճակները, որոնցում դուք կամ տուժածը անվտանգ չեք: Կարող ես լինել այլ պատասխանատու անձինք, որ կարող են օգտակար լինել մնալ իրավիճակներում:
- **Ցուցում վարողի համար.** ներկայացրե՛ք ՊՍՈՉ աշխատակարգերը և ձեր հանգամանքների հանչվող այլ կիրառելի ընթացակարգեր, այդ թվում՝ գաղտնիության սահմանները, տեղեկության տարածման հնարավորությունները/հաշվետվությունների պահանջներն ու առաջնահերթությունները երեխաների դեպքում:
- Հի՛շտ է, եթե ցանկանում եք դիմել ձեր ղեկավարին կամ այլ մասնագետի, ՄԻՇՏ հարցրե՛ք տուժածի թույլտվությունը՝ նշելով, թե ում հետ եք ցանկանում կիսվել, ինչ նպատակով և որ տվյալներով: Եթե տուժածի համար դա այդքան էլ հարմար չէ, կամ նա կտրուկ մերժում է, ապա փորձե՛ք նրան աջակցել գրպանի ուղեցույցում նկարագրված մեթոդներով:
- Որպես հումանիտար ոլորտի աշխատակից՝ ձեր պարտականությունն է հարգել ու պաշտպանել բոլոր անձանց կարիքներն ու իրավունքները, չանել կանխակալ ենթադրություններ ու դատողություններ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներկայացում և խմբային քննարկում

ԳՈՐԾԻՔՆԵՐ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գրպանի ուղեցույցի «ԿԱՊԵՔ» բաժնի «կարելիներն» ու «չի կարելիները» էջեր 9 - 10, «ԿԱՊԵՔ»-ի բովանդակությունը էջ 15, մանկական բաժնի «ԿԱՊԵՔ» հատվածը էջ 19

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓՈՒՆԵՐ

- **Ցուցում վարողի համար.** հաշվի՛ առեք ԳԲ մասնագետի հետ վարելու տարբերակը:
- Ձեր առաջնային պարտականությունը հասանելի ծառայությունների վերաբերյալ տեղեկություն տրամադրելն է: Եթե այդ ծառայությունները գոյություն ունեն, տուժածին տրամադրե՛ք ճշգրիտ տեղեկություններ:
- Եթե նման ծառայություններ չկան, կարևոր է անկեղծ լինել տուժածի հետ և ցույց տալ, որ գնահատում եք տեղի ունեցածը ձեզ պատմելու նրա խիզախությունը, հայցել նրա ներողամտությունը լրացուցիչ աջակցություն չտրամադրելու համար և հնարավորինս հարգանքով վերաբերվել նրան զրույցի ընթացքում:
- Չրույցն ավարտե՛ք կարեկցանքով: Հիշե՛ք, որ պետք է օգնեք տուժած անձին ճիշտ ընտրություն անելու և որոշում կայացնելու, նույնիսկ եթե դրանցից ոչ մեկը չի արվել: Կարիք չկա կրկնելու հանդիպումը կամ քննարկումը կամ խորհրդատվություն անցկացնել կամ նորից փորձելու դեպքը վարել:

- Չրույցն ավարտելուց հետո հետևե՛ք մեր կազմակերպության աշխատակարգերին նման իրավիճակներում տեղեկությամբ կիսվելու համար: **Ցուցում վարողի համար. մանրամասներ ներկայացնելու համար պետք է նախապատրաստվել:**
Մի՛ տարածեք տուժածի կամ միջադեպի մասին որևէ տեղեկություն: Կարևոր է հիշել, որ կարող եք ամեն ինչ ճիշտ անել, սակայն դուք չեք կարող լուծել այդ մարդու խնդիրը կամ ամոքել նրա ցավը: Այլուց փորձի մասին լսելը կարող է ձեզ ենթարկել ցավալի, տրավմատիկ ու վշտացնող ազդեցության, ինչը հայտնի է նաև որպես երկրորդային տրավմա: Հո՛գ տարեք ձեր մասին, քանզի այդ զգացմունքները կարող են ձեզ վնասել: Չորակցության ու աջակցության նպատակով դիմե՛ք ձեզ հասանելի ծառայություններին:
Ցուցում վարողի համար. ներկայացրե՛ք աշխատակիցների խնամքի կազմակերպման տարբերակները, ներառյալ հոգեբանական աջակցություն ստանալու նպատակով, թիմի առաջնորդի հետ ապահով միջավայրի տրամադրումը:
- Եթե ձեզ անհանգստացնում է տուժածի առողջությունը, կամ եթե նա ստացել է անհրաժեշտ աջակցությունը, ապա հետագայում համագործակցե՛ք ծառայություն տրամադրողի հետ: Ուղիղ մի՛ դիմեք տուժածին:
- Զանի որ բռնությունը կարող է կրկնվել, դուք կարող եք հանդիպել այդ անձին՝ լսելով, որ նա կրկին ենթարկվել է բռնության: Անձի վերապրածը դուք չեք կարող փոխել, սակայն յուրաքանչյուր միջադեպից հետո կարող եք լսել նրան առանց դատելու՝ անկախ այն փաստից, թե մինչ այդ քանի անգամ եք խոսել նրա հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ I: Հիմնական հասկացություններ

Ինչ է գենդերային բռնությունը

Գենդերային բռնությունը ընդհանուր սահմանում է: Այն վնասակար գործողություն է, որ կատարվում է անձի կամքին հակառակ և հիմնված է կանանց ու տղամարդկանց միջև առկա սոցիալական համարվող (գենդերային) տարբերությունների վրա: Այն ընդգրկում է ֆիզիկական, սեռական կամ հոգեկան վնասները կամ տառապանքը, դրա սպառնալիքը, հարկադրանքը և ազատությունից զրկվելը: Նման գործողությունները կարող են լինել հրապարակային կամ գաղտնի:

ԳԵՆԴԵՐ հասկացությունը վերաբերում է կանանց և տղամարդկանց միջև առկա սոցիալական տարբերություններին, որոնք ձեռք են բերվում կյանքի ընթացքում: Թեև դրանք արմատացած են ցանկացած մշակույթում, ժամանակի ընթացքում ենթակա են փոփոխությունների և շատ տարբեր են տարբեր մշակույթներում: «Գենդերը» սահմանում է որևէ մշակույթում կանանց ու տղամարդկանց դերերը, պատասխանատվությունները, հնարավորությունները, արտոնությունները, ակնկալիքներն ու սահմանափակումները:

Արտակարգ իրավիճակների ու տեղահանությունների ընթացքում ԳԲ նպաստող գործոնների օրինակներ.

- Նոր սպառնալիքներ/հակամարտությունից բխող ԳԲ ձևեր:
- Անձնական կյանքի բացակայություն, գերծանրաբեռնված ծառայություններ և հիմնական կարիքների բավարարման ապահով հնարավորությունների բացակայություն:
- Մարդասիրական աջակցության տրամադրման ձևը կարող է բարձրացնել ԳԲ ռիսկը կամ առաջացնել նոր ռիսկեր:
- Բաժանում ընտանիքի անդամներից, փաստաթղթերի բացակայություն, խտրականություն գրանցման ժամանակ:
- Պաշտպանիչ սոցիալական մեխանիզմների և վարքագիծը կարգավորող նորմերի քայքայում:
- Խոցելիության բարձր մակարդակ և կախվածություն. Շահագործում:
- Խմբերի միջև հաղորդակցման նոր մեխանիզմների ներմուծում, ինչպես նաև հումանիտար ոլորտի աշխատակիցների դեպքում:

Որն է գենդերային բռնության պատճառը: Որոնք են ԳԲ նպաստող գործոնները

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒԺԻ ԶԱՐԱՇԱՅՄԱՆ ՀԵՏԵՎԱՔ Է. ցանկացած անձ կարող է դառնալ ԳԲ զոհ, այդ թվում՝ տղամարդիկ ու տղաները, սեռական ու գենդերային փոքրամասնությունները. կանայք և աղջիկները կարող են արժանանալ անհամաչափ բռնության վերադասի կողմից, զրկվել լիազորություններից, պատժվել կամ վերահսկողության տակ հայտնվել: Բռնարարի և տուժողի սեռը իմանալը կարևոր է ոչ միայն բռնության պատճառը պարզելու, այլև այն տեսանկյունից, թե ինչպես է հասարակությունը քննադատում կամ արձագանքում բռնությանը:

ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆԸ խնդիրը բարդացնող հանգամանք է: Գենդերային բռնությանը նպաստող գործոնները տարբերվում են ըստ հանգամանքների, բնակչության և ԳԲ տեսակի: ԳԲ ծանրացմանը նպաստում են բազմաթիվ իրավիճակներ, մասնավորապես արտակարգ իրավիճակները, որ ներկայացված են ստորև: Այս օրինակներն ընդգծում են ԳԲ վերացման կարևորությունը՝ լայնածավալ միջամտությունների միջոցով, որ թիրախավորում են տարբեր ռիսկեր:

ՀԱՎԵԼՎԱԾ I: Հիմնական հասկացություններ

Գեղերային բնության ինչ ձևեր կան

ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած սեռական հարաբերություն կամ դրա փորձը, որ տեղի է ունեցել մարդու կամ քիչ հակառակ կամ այնպիսի հանգամանքներում, որոնցում տուժողը համաձայնություն չի տվել, սեռական բնություն է: Սեռական բնության տեսակներն են՝ բռնաբարություն (ստիպողական սեռական հարաբերություն, այդ թվում՝ զուգընկերոջ կամ ամուսնու կողմից), սեռական ոտնձգություն, սեռական շահագործում իշխանության լծակներ ունեցողի կողմից կամ փողի, ծառայությունների կամ ապրանքի դիմաց:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկական բնություն, որը սեռական բնույթի չէ: Բնության այս ձևը հաճախ տեղի է ունենում զուգընկերների միջև: Այն կարող է ընդգրկել բռնի կամ արհամարհական վերաբերմունքից բխող գործողություններ, որ առաջացնում են ցավ ու տառապանք. օրինակ՝ հարվածելը, ապտակելը, խեղդելը, հրելը, ճանկելը, ծակելը, կծելը, մազերը քաշելը, այրելը, կտրելը, հրագեն կամ այլ զենք օգտագործելը:

ՀՈԳԵԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Հոգեկան կամ հուզական ցավի կամ տառապանքի պատճառումն է: Դա ընդգրկում է ոչ ֆիզիկական բնություն սովորաբար զուգընկերոջ կամ իշխանություն ունեցող անձի կողմից: Օրինակ՝ վիրավորանքը հուզական և հոգեբանական բնություն է:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Սա ֆիզիկական բնություն չէ, կարող է ամրագրված լինել այնպիսի օրենքներում ու գործողությունների ծրագրերում, որոնք մերժում են կանանց ու աղջիկների, ինչպես նաև խոցելի խմբերի հավասար իրավունքները, նրանց եկամուտ ստանալու, ֆինանսական ծառայություններից օգտվելու, ակտիվներ ունենալու և առաջխաղացման հնարավորությունները: Օրինակների շարքում են. (1) խտրականությունը և/կամ զրկելը հնարավորություններից, ծառայություններից ու միջոցներից, (2) կրթություն ստանալու, բժշկական ծառայություններից օգտվելու ու վարձատրվող աշխատանք ունենալու հնարավորությունից և/կամ (3) սեփականության իրավունքից: Նման բնության կարող են դիմել ընտանիքի անդամները, հասարակությունը, կազմակերպությունները:



Որոշ վնասակար ավանդույթներ

Նույնպես կարող են համարվել գեղերային բնություն, եթե միտված են կանանց ու աղջիկների ստորադասմանը հասարակությունում:

Դրանց շարքում են կանանց սեռական օրգանների խեղումը (ԿՍՕԽ), ստիպողական ու անչափահասների ամուսնությունը և պատիվը փրկելու նպատակով սպանությունները:

Բնություն զուգընկերոջ

կողմից, որ նաև ընտանեկան բնություն է. բռնի վարքագիծ է, որ արտահայտվում է մոտ հարաբերություններում, այդ թվում ամուսնության, զուգընկերոջ նկատմամբ իշխանության կամ վերահսկողության ձևավորման նպատակով: Այն հաճախ ընդգրկում է բնության տարբեր ձևեր, այդ թվում՝ շարունակական հուզական/հոգեբանական և սեռական բնությունը

Պաշտպանություն սեռական ոտնձգությունից և չարաշահումից (ՊՍՈԶ)

Պաշտպանությունը սեռական ոտնձգությունից և չարաշահումից վերաբերում է հումանիտար ոլորտի ու համապատասխան այլ աշխատակիցների (մարդասիրական աջակցություն տրամադրողների, կամավորների, անվտանգության աշխատակիցների, կապալառուների, ՄԱԿ-ի առաքելության աշխատակիցների, ՄԱԿ-ի ոստիկանական ուժերի, խաղաղապահների, մատակարարների/ծառայություն մատուցողների և այլոց) գործադրած բռնի գործողություններից խոցելի խմբերի պաշտպանությանն ուղղված քայլերին:

Որոնք են գենդերային բռնության հետևանքները այն վերապրողների համար

Գենդերային բռնությունը լուրջ հետևանքներ կարող է ունենալ տուժածների սեռական, ֆիզիկական ու հոգեբանական առողջության վրա: Այն նպաստում է ապագայում առողջական խնդիրների առաջացման ռիսկի ձևավորմանը: Գենդերային բռնությունը կյանքին սպառնալիք է ներկայացնում, և դրա հնարավոր հետևանքների շարքում են.

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
Ֆիզիկական վնասվածքներ	Ընկճախտ և վշտացածություն	ՉՈՐԻՆ ՄԵՂԱԴԻԵԼԸ
Հաշմանդամություն	Վախ և տագնապ	ԽԱՐԱՆ
Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ, ներառյալ ՄԻՎՎ-ը	Մեղքի և ամոթի զգացում	ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ և ԱՐՅԱՄԱՐՅՈՒՄ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ Ա/ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ
Անցանկալի հղիություն	Տրավմայի վերապրում, հանկարծակի վերհուշ	Պարտադրված ամուսնություն
Ոչ անվտանգ հղիության ընդհատում, վիժում	Տարբեր վայրերից ու իրավիճակներից խուսանավում, մեկուսացում	Վաստակելու փոքր հնարավորություններ
Խուղակներ	Չայրույթ	Խորացված աղքատություն
Խրոնիկական ցավեր	Ուշադրությունը կենտրոնացնելու ու հիշելու դժվարություններ	Կրկնակի զոհ դարձնելու ռիսկ
Խանգարված քուն և վատ ախորժակ	Ինքն իրեն վնասելու հակվածություն	Մահ/պատիվը փրկելու նպատակով սպանություն
Մահ, այդ թվում՝ ինքնասպանություն	Սուիցիդալ մտքեր/գործողություններ	

ՅԱՎԵԼՎԱԾ I: Հիմնական հասկացություններ

Օգտակար կլինեն նաև հասկանալ, թե որոնք են գենդերային բռնության հնարավոր հետևանքները, որ կարող են ազդել տուժողի վարքագծի ու որոշումների վրա: Նաև շատ կարևոր է կրկին վնաս չհասցնելը և չխորացնելը բացասական հետևանքները, օրինակ՝ մեղադրելով տուժածին բռնության ենթարկվելու համար:

Ի վերջո տուժած անձանց համար սոցիալական հետևանքների առաջացման վտանգը ստիպում է մեզ պահպանել գաղտնիությունը: Բռնություն վերապրած մարդիկ չեն դիմի օգնության, եթե կասկածեն, որ միջադեպի մանրամասների մասին կարող են իմանալ ընտանիքի անդամները կամ համայնքը, ինչը նրանց համար կհանգեցնի սոցիալական հետևանքների: Ինչքան ավելի ամրապնդեք վստահությունը՝ պահպանելով գաղտնիությունը, այդքան տուժածը ավելի շատ կվստահի ձեզ և կրկին կդիմի ձեր օգնությանը:

Ինչ կարիքներ ունի ԳԲ վերապրած անձը

Գենդերային բռնության վերը նշված բազմաթիվ հետևանքների պատճառով այն վերապրող անձինք ունեն բազմաթիվ ու տարատեսակ կարիքներ: Բռնության հակազդեցությունը տարբեր է տարբեր մարդկանց մոտ: Տարբեր են նաև նրանց կարիքները: Հետևաբար, անհրաժեշտ է ԼՍԵԼ և հարցնել, թե ինչ կարիքներ ունեն՝ ամենահրատապ կարիքների վերաբերյալ ենթադրություններ անելու փոխարեն: Բռնության ենթարկված անձը նաև կարիք ունի, որ նրան հավատան և չմեղադրեն կատարվածի համար, որպեսզի ձևավորվեն վստահելի հարաբերություններ, որոնց շրջանակում տուժած անձը կցանկանա դիմել օգնության:

Տուժած անձի, ինչպես նաև ձեր ֆիզիկական ու հոգեկան առողջությունը պետք է առաջնահերթ լինի, երբ ձեզ ներկայացնում են գենդերային բռնության վերաբերյալ տեղեկություններ: Եթե առողջապահական ծառայությունները հասանելի են, ապա ԳԲ ֆիզիկական հետևանքների մի մասը կարելի է հոգալ, սակայն սոցիալական ու հոգեբանական հետևանքները ավելի տևական են: Եթե տարածքում չկան մասնագիտացված բժշկական, հոգեբանական կամ իրավաբանական ծառայություններ, ապա ԳԲ զոհերին աջակցության ծառայությունների վերաբերյալ մանրամասները կարող եք տեսնել գրպանի ուղեցույցում:

Ուսումնասիրե՛ք գրպանի ուղեցույցում ներկայացված ցուցումներն ու հակացուցումները տուժածի հուզական անվտանգությունն ապահովելու նպատակով:

Որոնք են ԳԲ զոհերին վնաս չհասցնելու հիմնական սկզբունքները

ՎՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անվտանգությունը վերաբերում է ֆիզիկական անվտանգությանը և վնասներից պաշտպանվածությանը, առավել հյուժվածների համար նաև հոգեբանական ու հուզական անվտանգությանը: Կարևոր է նաև հաշվի առնել յուրաքանչյուր տուժածի, նրա ընտանիքի անդամների, խնամողների և ձեր անվտանգությունը:

Գենդերային բռնության զոհ ներկայացած անձը ենթարկված է բռնության (նաև սեռական բռնության) կրկնվելու ռիսկին, որ կարող է գործադրվել նույն բռնարարի ու նրան պաշտպանող մարդկանց (նրա ընտանիքի, տեղական իշխանությունների ու առաջնորդների) և սեփական ընտանիքի կողմից՝ ընտանիքի պատիվը պահելու մղումով:

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գաղտնիությունը վերաբերում է անձին վերաբերող տեղեկության գաղտնի պահելու իրավունքին, եթե նա բացահայտ կերպով չի պահանջում հակառակը: Այն ապահովում է անվտանգություն, վստահություն և ուժ: Գաղտնիություն պահպանելը նշանակում է հասանելի տեղեկությունը ոչ ոքի չտրամադրել և ոչ մի տեղ չիրապարակել առանց տուժած անձի համաձայնության: Գաղտնիության բացակայությունը կարող է վտանգել տուժածին և այլոց (որոնց տուժած անձը պատմել էր եղելությունը):

ԱՐԺԱՆԱԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Բոլոր նրանք, ովքեր շփվում են տուժածների հետ, հատուկ դեր ունեն գեղեցիկ բռնությամբ նվաստացված արժանապատվության վերականգնման ու ինքնորոշման գործում: Օրինակ՝ տուժածները իրավունք ունեն որոշելու, թե ում պատմեն իրենց հետ պատահածը և ո՞ր ծառայություններից օգտվեն: Բռնություն վերապրած անձն է առաջնային, իսկ աջակիցների դերը տեղեկություն տրամադրելն է, որ կարող են օգտագործել նրանց վերականգնման ընթացքում: Տուժածի նկատմամբ հարգանք ու արժանապատվություն չցուցաբերելը, նրանց ցանկություններն ու իրավունքները չհարգելը կարող են խորացնել անելանելիության ու ամոթի զգացումը, ինքն իրեն մեղադրելու ցանկությունը և կրկնակի զոհ դարձնել նրան:

ԽՏՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԼԻՆԵՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Բոլորն ունեն լիարժեք աջակցություն ստանալու իրավունք՝ անկախ սեռից, տարիքից, հաշմանդամության կարգավիճակից, ռասայից, լեզվից, կրոնական ու քաղաքական համոզմունքներից, սեռական կողմնորոշումից ու սոցիալական դասից:

Չիմնական հասկացությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք դիմել հետևյալ աղբյուրներին.

- **ԳԲ ուղեցույց (EN, AR, FR, SP):** <http://gbvguidelines.org/en/home/> GBV
- **ԳԲ արձագանքներ.** <http://gbvresponders.org/response/core-concepts/>
- **ՊՍՈՉ աշխատանքային խումբ.** <http://www.pseataaskforce.org/>
- **ԱՅԿ.** http://apps.who.int/iris/bitstream/10665/44615/1/9789241548205_eng.pdf

Լրացուցիչ ռեսուրսներ, այդ թվում՝ գործիքներն ու գործողությունները

Մեր կայքէջում մենք շարունակաբար թարմացնում ենք հասանելի ռեսուրսների մեր ցանկը (գրպանի ուղեցույցի համար)՝ www.gbvguidelines.org: Ունե՛ք ներկայացնելու նյութեր: Ուղարկե՛ք էլ. փոստով՝ gbv.guidelines@gmail.com

ՈԼՈՐՏ	ՌԵՍՈՒՐՍ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
ՄԳՄՅ ԳԲ ուղեցույց	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՅՈՒԹԵՐ (ԱՆԳԼԵՐԵՆ, ՀԱՅԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵՐԵՆ և ԻՍՊԱՆԵՐԵՆ)	https://gbvguidelines.org/en/training/
ԶԶՀ	ԲՈՆՈՒԹՅՈՒՆ, ԳԵՆԴԵՐ և ԶԶՀ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ	https://violence-wash.lboro.ac.uk/
Պարենի անվտանգություն	ՊԻՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՁԵՆՆԱՐԿ	https://gbvguidelines.org/en/documents/world-food-programme-gender-based-violence-manual/
Կենսակերպ	CLARA	https://www.womensrefugeecommission.org/research-resources/clara-tool/
Ապաստան	Ապաստանի, ԳԲ զոհերի մշտական աջակցության ձեռնարկ	https://www.sheltercluster.org/gbv
Կանխիկ գումար/կանխիկացում և կանխիկ միջոցների պաշտպանություն՝ օգտակար նյութեր	Կանխիկ դրամով գործարքների ուսուցման գործընկերությունից (CaLP)	http://www.cashlearning.org/ctp-and-multi-sector-programming/protection
Տուն, հող, սեփականություն	ՏՀՍ ապահովում կանանց համար՝ փախստականների հարցերով նորվեգական խորհրդի կողմից	http://nrc.no/
Հոգեկան առողջություն և սոցիալ-հոգեբանական աջակցություն	Հոգեբանական առաջին աջակցության վերաբերյալ ԱՀԿ ուղեցույց Հոգեկան առողջության ու հոգեբանական աջակցության ցանց	http://nrc.no/ https://www.mhpss.net

ՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարմնի լեզուն

Մարմնի լեզուն այն ուղերձներն են, որ մենք արձակում ենք դեմքի ու մարմնի այլ մասերի միջոցով: Դա նաև ընդգրկում է նստելու ձևն ու տեղը, ինչպես նաև այն միջավայրը, որ ստեղծում ենք: Մենք կիրառում ենք ստորև բերված գործելակերպը որպես տուժած անձի մարմնի լեզուն հասկանալու արդյունավետ միջոց:

- **Դեմառդեմ.** նշանակում է նստեք այնպես, որ դեմ դիմաց լինեք տուժածի հետ:
- **Բաց.** նշանակում է տուժածի և ձեր միջև տարբերություններ չկան: Չկա սեղան, չկան առարկաներ: Տարածքը ձեր և տուժած անձի միջև բաց է:
- **Հենվե՛ք.** այսինքն՝ նստե՛ք առաջ՝ դեպի տուժողը: Դա նրան թույլ կտա մտածել, որ դուք հետաքրքրված եք նրա պատմածով, ցանկանում եք մնալ և լսել:
- **Տեսողական կապ.** դա նշանակում է՝ անընդհատ նայեք նրա աչքերի մեջ (իհարկե, եթե դա տվյալ մշակույթում չի համարվում վիրավորական):
- **Թույլ թողեք ձեզ.** այսինքն՝ նստած դիրքը չպետք է լարված լինի: Դա չի նշանակում, որ պետք է փռվել աթոռին, պարզապես պետք չէ լարված ու ձգված լինել: Մենք պետք է փորձենք հարմարավետության ու հանդարտության զգացում առաջացնել տուժածի մոտ:

Բանավոր ուղերձներ

Բանավոր խոսքն այն է, ինչ ասում ենք կամ դնում գրույցի բովանդակության մեջ: Հետևելով տուժած անձի խոսքի արագությանը, օգտագործելով նույն լեզուն և տալով պարզ բացատրություններ՝ մենք կկարողանանք ստեղծել անվտանգության ու հարմարավետության զգացում, որը կօգնի տուժածին՝ պատմելու եղելությունը: Փորձե՛ք լուռ և համբերատար լինել՝ տուժածին ժամանակ տալով մտքերը և զգացմունքները կարգավորելու համար, թեև դա կարող է չափազանց բարդ առաջադրանք լինել շատերիս համար:

Ակտիվ ունկնդրի հմտություն

- **Օգտագործե՛ք** բաց հարցեր, որպեսզի իրապես հասկանաք, թե ինչ են մտածում և զգում տուժածները:
- **Վերաձևակերպե՛ք** և ամփոփ ներկայացրե՛ք («Եկե՛ք փորձենք ամփոփել այն ամենն, ինչ ինձ պատմել եք»):
- **Արտահայտե՛ք** համաձայնություն և/կամ զգացմունքներ («Կարծես թե, երբ նա գոռաց ու բռունցքը բարձրացրեց, շատ էիք վախեցել»): Քննարկե՛ք տուժածի զգացմունքներն ու մտքերը, որպեսզի դրանք տեսանելի դառնան նրա համար, ինչպես հայելու առջև: Օգնեք նրան կողքից նայելու իր իրավիճակին ու հասանելի լուծումների տարբերակներին: Օգնե՛ք նրան կենտրոնանալու:

Գնահատե՛ք և կարգավորե՛ք

- Լավագույնը, որ կարող ենք անել, տուժածի զգացմունքները հասկանալն ու կարգավորելն է: Օրինակ՝ եթե տուժած անձը արտասվում է, կարելի է ասել. «**Դուք կարող եք վշտացած լինել: Շատ նորմալ է, եթե արտասվեք այստեղ, ես Ձեզ հետ կլինեմ, և կշարունակենք, երբ պատրաստ լինեք**»:
- Քանի որ մենք ցանկանում ենք, որ տուժածն իրեն լավ զգա, կարող ենք բնագոյաբար նրան խնդրել չարտահայտել զգացմունքները կամ փորձել մեղմացնել դեպքի հանգամանքները. օրինակ՝ «Մի՛ վախեցեք», «Մի՛ լացեք», «Այդքան վատ չէ ամեն ինչ» կամ «Ամեն ինչ լավ կլինի»: Սակայն այդ ամենի փոխարեն պետք է տուժածին բացատրել, որ նրա հակազդումը **ոչ նորմալ** միջադեպի նկատմամբ նրա հակազդումը **նորմալ է**: Արտասվող, զայրացած կամ ընկճված անձի հետ նստելը կարող է անհարմարություններ առաջացնել մեզ համար, սակայն իրական օգնություն տրամադրողը պետք է տուժածին թույլ տա արտահայտել զգացմունքները:
- Պետք չէ տուժածին ասել, թե ինչ չպետք է զգալ: Փոխարենը անհրաժեշտ է **գնահատել և կարգավորել** նրա զգացմունքները:

Ամոքիչ խոսքերը կարող են օգնել տուժածին անմիջապես միջադեպի մասին պատմելուց հետո և ընթացքում՝ բուժմանն ու վերականգնմանը նպաստելով:

- «Հավատում եմ»
- «Ուրախ եմ, որ պատմեցիք ինձ»
- «Ցավում եմ, որ դա Ձեզ հետ պատահել է»
- «Դուք մեղավոր չեք»
- «Դուք շատ խիզախ եք, որ որոշել եք ինձ պատմել այդ ամենը»

Վարքագծային ուղերձներ

Վարքագծային ուղերձն այն է, ինչ մենք անում ենք: Կարևոր է տրամադրել տեղեկություն, ոչ թե խորհուրդներ:

Խորհուրդ տալ նշանակում է ասել, թե ձեր կարծիքով անձը ինչ պետք է անի և ինչպես: ԳԲ դեպքերում խորհուրդ տալն օգտակար չէ, որովհետև դուք չգիտեք՝ ճիշտ խորհուրդ եք տալիս, թե՛ ոչ: Որպես աջակիցներ՝ մենք երբեք չպետք է խորհուրդ տանք տուժած անձանց:

Տեղեկության տրամադրումը նշանակում է բացատրել փաստերն այնպես, որ անձը տեղեկացված որոշում կայացնի ապագա անելիքի վերաբերյալ: ԳԲ դեպքերում տեղեկություն տրամադրելն օգտակար է, քանի որ դա տուժած անձին տալիս է ընտրության իրավունք և ցույց է տալիս, որ դուք հարգում եք նրա կարծիքներն ու դատողությունները:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Մարդակենտրոն վերաբերմունք

Տուժողը երբեք պատասխանատվություն չի կրում իր նկատմամբ գործադրված բռնության համար: Բռնի միջոցներին դիմելը միշտ բռնարարի ընտրությունն է: Դա անհրաժեշտ է հիշել: ԳԲ վերապրած անձանց անվտանգությունն ու վերականգնման հնարավորությունները պահպանելու և նրանց լրացուցիչ վնաս չհասցնելու համար:

Այս աշխատանքում մենք բոլորս դրսևորում ենք մեր վերաբերմունքն ու համոզմունքները, որոնցից մի քանիսը կարող են վնասակար լինել տուժածների համար, և մենք այդ մասին կարող ենք նույնիսկ չիմանալ: Կարևոր է հատկորոշել նման համոզմունքները և պայքարել դրանց դեմ:

Տուժողին մեղադրելը շատ հասարակություններում սովորական երևույթ է, որի դեմ պետք է ակտիվորեն պայքարենք՝ տուժած անձանց հետ մեր աշխատանքի ընթացքում դրանից խուսափելու համար: Չոհակենտրոն մոտեցումները ենթադրում են տուժածի լավագույն շահերի պաշտպանություն՝ առաջին հերթին համոզված լինելով, որ արված ամբողջ աշխատանքը բխում է տուժած անձի ցանկություններից ու կարիքներից:

ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԵՎ ՉԱՄՈՉՄՈՒՆՔՆԵՐ	ԱԶԱԿՑՈՂ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՈՒ ՉԱՄՈՉՄՈՒՆՔՆԵՐ
Եթե ոչ պատշաճ վարքագիծ ունեցող կանանց կամ աղջիկներին բռնաբարում են, դա նրանց մեղավորությամբ է:	Բռնաբարելու որոշումը կայացնում է բռնարարը՝ կիրառելով բռնի ուժ այլ անձի նկատմամբ: Այն երբեք չի կարող տուժածի մեղավորությամբ լինել: Գենդերային բռնությունը միշտ բռնարարի մեղավորությամբ է:
Եթե տուժած անձը չի կարող պատասխանել հարցազրույցի ընթացքում տրված հարցերին, ուրեմն միջադեպը հորինված է:	Հոգեբանական ու հոգեկան տրավմաները կարող են շփոթություն առաջացնել, ինչը կիսանգարի տուժածին հարցերը հասկանալ և պատասխանել դրանց:
Կինն իր վարքագծով է ամուսնուն ստիպում դիմել բռնության:	Բռնության դիմելը բռնարարի որոշումն է, և այն արդարացում չունի հարաբերություններում:
Ստիպողական սեռական հարաբերությունը պարզապես տեղի է ունենում, որովհետև ստիպողը ի վիճակի չէ կառավարելու իր սեռական ցանկությունները:	Բռնաբարողների մեծ մասին դրդում են ուժը, զայրույթը և տիրելու ցանկությունը, այլ ոչ թե սեռական հարաբերության ցանկությունը: Տղամարդիկ կարող են կառավարել իրենց սեռական ցանկությունները: Բռնաբարությունը նախապես է ծրագրվում, և տղամարդը այդ քայլին դիմում է սառնասրտորեն:
Չուզընկերոջ կողմից բռնությունը (ՉԿԲ)/ ընտանեկան բռնությունը ընտանիքի ներքին խնդիրն է և պետք է կարգավորվի ընտանիքի ներսում:	ՉԿԲ-ն անվտանգության ու առողջության տեսանկյունից մտահոգիչ խնդիր է համայնքի համար և հանցագործություն բազմաթիվ երկրներում: Հազարավոր կանայք սպանվում են ամեն տարի ՉԿԲ-ի հետևանքով: ՉԿԲ վերապրածներին պետք է համայնքի գորակցությունը:
Տղամարդկանց մեծ մասը ծեծում են իրենց կանանց միայն, երբ ակոհողի կամ թմրանյութերի ազդեցության տակ են:	Թմրանյութերն ու ակոհողը կարող են նպաստել գենդերային բռնությանը: Սակայն ԳԲ հիմնական պատճառը բռնարարի՝ ուժ գործադրելու ու վերահսկելու ցանկությունն է: Ակոհող կամ թմրանյութեր չարաշահող ոչ բոլոր տղամարդիկ են ծեծում իրենց կանանց: Սակայն նրանք նախապես որոշում են, թե ում նկատմամբ գործադրեն բռնությունը:

ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԵՎ ՉԱՄՈՉՄՈՒՆՔՆԵՐ	ԱԶՆԿՑՈՂ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՈՒ ՉԱՄՈՉՄՈՒՆՔՆԵՐ
ԳԲ վերապրած անձը միջադեպի մասին միշտ պետք է հաղորդի ոստիկանությանը կամ իրավապահ այլ մարմինների:	Վերապրողը պետք է կարողանա ընտրել, թե ում կպատմի դեպքի մասին:
Տղամարդը չի կարող բռնաբարել կնոջը:	Կինը պետք է կարողանա հայտնել զուգընկերոջը/ամուսնուն, թե ցանկանում է արդյոք սեռական հարաբերություն ունենալ: Բազմաթիվ երկրներում արդեն կան օրենքներ, որ արգելում են բռնի սեռական հարաբերությունները ամուսինների միջև: Ամուսնացած կանայք վայելում են անվտանգության նույն իրավունքները, ինչ չամուսնացածները: Բռնության դիմող զուգընկերոջ հետ ապրող շատ կանայք ենթարկվել են որևէ տեսակի սեռական բռնության ամուսնական կյանքում:
Յուրմանկատար ուղրտի աշխատակիցը պետք է որոշի, թե արդյոք տուժածը ճշմարտությունն է պատմում:	Յուրմանկատար ուղրտի աշխատակցի գործը տուժածին աջակցելն ու հավատալն է:
Կանանց բռնաբարում են, որովհետև նրանք ճիշտ հագուստ չեն կրում կամ այցելում են սիսալ վայրեր:	Բռնաբարողն ընտրում է զոհին՝ համարելով նրան անօգնական, ոչ թե նրա հագուստի պատճառով: Որևէ անձ, անկախ վարքագծից, չի կարող «արժանանալ» բռնաբարության:
Կանայք հաճախ ստում են, թե բռնաբարության զոհ են դարձել:	Գլորբալ հետազոտությունները ցույց են տալիս, որ ինչպես և այլ ծանր հանցագործությունների դեպքում, բռնաբարության մասին հաղորդումների շատ փոքր տոկոսն է կեղծ:
Բռնաբարությունը տեղի է ունենում միայն դրսում, գիշերը, երբ զոհը միայնակ է:	Բռնաբարությունը տեղի է ունենում ցանկացած ժամանակ և ամենուր: Բազմաթիվ բռնաբարության դեպքեր տեղի են ունենում ցերեկվա ժամերին և զոհի տանը: Օրինակ՝ բռնաբարության զոհ կարող են դառնալ հաշմանդամություն ունեցող կանայք կամ աղքիկները, եթե տանը մենակ են: Բացի այդ, հաճախ բռնաբարը նրանց ծանոթն է (կամ խորթ հայրը, քեռին և այլն): Նման բռնաբարությունները հաճախ տանն են պատահում:
Եթե մարդը չի փորձել պաշտպանվել, ուրեմն բռնաբարություն չի եղել:	Բռնաբարությունը հնարավոր սպառնալիք է կյանքի համար: Նման վտանգից փրկվելու համար մարդը կարող է ցանկացած ճանապարհ ընտրել, և դրանցից մեկը չպաշտպանվելն է, նաև վախեցած լինելու պատճառով:
Եթե տուժողը մարմնական վնասվածքներ չունի, ուրեմն բռնաբարություն չի եղել:	Մարմնական վնասվածքներ կարող են չլինել:
Արյունապղծությունը (բռնաբարություն կամ սեռական բռնություն ընտանիքի անդամների կողմից) հազվադեպ է պատահում:	Արյունապղծությունը տարածված է և պատահում է ցանկացած համայնքում:
Արյունապղծությունը տարածված է և պատահում է ցանկացած համայնքում:	Ըստ որոշ տվյալների՝ բռնաբարության զոհերի 80 %-ը ճանաչում է բռնաբարներին: Բռնաբարողը կարող է լինել հարազատներից մեկը, բարեկամը, ընկերը, գործընկերը, զուգընկերը կամ այլ ծանոթ մարդ:
Ինտիմ ծառայությունների աշխատակիցները չեն կարող բռնաբարության զոհ դառնալ:	Ինտիմ ծառայությունների աշխատակիցներն էլ ավելի խոցելի են բռնաբարության ու սեռական բռնության այլ ձևերի տեսանկյունից:
Բռնություն վերապրած անձը չպետք է շատ մտածի պատահածի մասին: Նա պետք է ,մոռանա՞տ այն:	Այն անձինք, որոնց հնարավորություն չի տրվում պատմելու եղելությունը, անցնում են վերականգնման շատ ավելի երկար ճանապարհ: Բոլոր տուժած անձանց պետք է հնարավորություն տրվի խոսելու միջադեպի մասին ում հետ ցանկանում են:

